



Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
Գիտական խորհրդի 2022թ. սեպտեմբերի 20-ի
N1-09/22/3 որոշմամբ:

Ն.Ա.Միքայելյան

ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն փաստաթղթով սահմանվում է Շուշիի տեխնոլոգիական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) ֆինանսական քաղաքականությունը Համալսարանի որակի ներքին ապահովման գործընթացների համար, այդ գործընթացների ֆինանսավորման մեխանիզմները, ֆինանսական հարաբերությունների կարգավորումը մասնակից կողմերի միջև (Համալսարանի ղեկավար կազմ, Համալսարանի որակի ապահովման ստորաբաժանում, Համալսարանի որակի կառավարման հանձնաժողով, աշխատանքային խմբեր, աշխատակիցներ, գործընկերներ և այլն): Այն հիմնված է Համալսարանի կանոնադրության և Ռազմավարական ծրագրի VIII խնդրի պահանջների վրա՝ ֆինանսական շահ չի հետապնդում: Համալսարանի ֆինանսական քաղաքականության իրականացման համար պատասխանատու է Համալսարանի ղեկավորը:

II. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ.

2.1 Ֆինանսապես ապահովել Համալսարանի որակի ներքին ապահովման գործընթացներն իրականացնող ստորաբաժանման գործունեությունը:

- Նպաստել Համալսարանի ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացմանը:
- Ներդնել և մշտապես բարելավել Համալսարանի որակի ներքին ապահովման գործընթացներն իրականացնող ստորաբաժանման և տարբեր հանձնախմբերի գործունեության առանձնահատկություններին համարժեք ֆինանսական ապահովման մեխանիզմներ:

III. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ

Հաշվարկել որակի ներքին ապահովման գործընթացներին անհրաժեշտ ֆինանսական միջոցները և ապահովել հոսքը:

- Իրականացնել նախատեսված ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը:
- Կարգավորել որակի ներքին ապահովման գործընթացների մասնակիցների ֆինանսական հարաբերությունները:

IV. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐՆ ԵՆ.

• Որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրում է Համալսարանն իր միջոցներից:

• Համալսարանի տարեկան բյուջեում որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման ծախսերի համար առանձնացված է հատուկ տող:

• Գործընթացներին անհրաժեշտ ֆինանսական նախահաշիվը, Համալսարանի որակի կառավարման հանձնաժողովում քննարկվելուց հետո, ստորաբաժանման ղեկավարը ներկայացնում Համալսարանի ռեկտորին՝ բյուջեի նախագծում ներառելու համար:

• Չնախատեսված ծախսերի առկայության դեպքում (վերապատրաստումներ, խորհրդատվություն, հրատարակություններ, կյուր-սեղաններ, այցելություններ, գործուղումներ և այլն) Համալսարանի որակի ապահովման ստորաբաժանման ղեկավարը գրավոր դիմում է Համալսարանի ռեկտորին:

• Որակի ներքին ապահովման գործընթացներում այլ մասնակիցներ ընդգրկելու դեպքում Համալսարանը վերջիններիս հետ կնքում է վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր, որի ձևանմուշը մշակում է Համալսարանի իրավախորհրդատուն:

• Ֆինանսական միջոցների ծախսերի և քաղաքականության իրականացման վերաբերյալ որակի ապահովման ստորաբաժանման ղեկավարը հաշվետվություն է տալիս Որակի կառավարման հանձնաժողովին, որը ներառվում է նաև ռեկտորի տարեկան հաշվետվության մեջ և հրապարակվում Համալսարանի պաշտոնական էլեկտրոնային կայքում:

Գիտական խորհրդի նախագահ

Գիտական քարտուղար



Ն.Ա. Միքայելյան

Ա.Ա. Առաքելյան